ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 22 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Իրինա Եղիգարյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Իրինա Եղիգարյանը 2018 թվականի փետրվարի 6-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասը, 414.2 հոդվածի 1-ին մասի դրույթները ճանաչել հակասահմանադրական, քանի որ խախտվել են ՀՀ Սահմանադրության 60, 61, 62, 63, 64, 66, 67, 68, 69 հոդվածները»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողը 2016 թվականի դեկտեմբերի 7-ին և դեկտեմբերի 30-ին դիմումներ է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ Վ. Դոլմազյանը 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 12/12/9935-16 և 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 12-525-16 գրություններով պատասխանել է դիմողի դիմումներին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի փետրվարի 21-ի և 2017 թվականի մարտի 17-ի որոշումներով դիմողի բողոքները մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի մարտի 30-ի և 2017 թվականի մայիսի 12-ի որոշումներով դիմողի բողոքները մերժվել են՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի փետրվարի 21-ի և 2017 թվականի մարտի 17-ի որոշումները թողնելով օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի օգոստոսի 1-ի որոշումներով մերժվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի մարտի 30-ի և 2017 թվականի մայիսի 12-ի որոշումների դեմ դիմողի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից՝ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմն անհրաժեշտ է համարում նշել, որ դիմողն սպառել է դատական պաշտպանության միջոցները և դիմելով ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկել է վերջնական դատական ակտեր հանդիսացող՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժելու մասին թիվ ԵԿԴ/0007/11/17 և թիվ ԵԿԴ/0032/11/17 գործերով որոշումներում վկայակոչված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները: Դիմումի շարադրանքից հնարավոր չէ պատկերացում կազմել այն մասին, թե դիմողը որ դատական գործի շրջանակներում է վիճարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները:

4. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

4.1. Դիմումին կից ներկայացված դատական ակտերի, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0007/11/17 գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին և ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0032/11/17 գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը նրա նկատմամբ չեն կիրառվել, չնայած այն հանգամանքին, որ վկայակոչվել են վերոնշյալ որոշումներում:

Երկու տարբեր դատական գործերով վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս դիմողը փաստարկել է, որ դրանք պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքը, այն է՝ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Ընդ որում, երկու գործերի հետ կապված վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս դիմողը մատնանշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված միևնույն հիմքը: Անդրադառնալով դիմողի վճռաբեկ բողոքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2017 թվականի օգոստոսի 1-ին կայացրած իր երկու որոշումներով արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ, քանի որ բողոքաբերը չի հիմնավորել, որ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը վերաբերում են համապատասխանաբար վճռաբեկ բողոքը վերադարձնելուն և վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելուն: Մինչդեռ խնդրո առարկա գործերի շրջանակում ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներով մերժել է դիմողի՝ տարբեր գործերով ներկայացված վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա խնդրո առարկա գործերի շրջանակներում դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքները ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից առանց քննության չեն թողնվել: ՀՀ վճռաբեկ դատարանը, մերժելով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը, արձանագրել է, որ՝ «... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

նախատեսված հիմքը հիմնավորված չէ, քանի որ բողոքաբերը չի հիմնավորել, որ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա... »: Այսինքն՝ դիմողի նկատմամբ առաջացած անցանկալի հետևանքները պայմանավորված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմնավորված չլինելու հանգամանքով:

Անհատական դիմումին առաջադրվող սահմանադրական և օրենսդրական պահանջներից մեկն էլ այն է, որ անհատական դիմում կարող է ներկայացնել այն անձը, որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ: ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով **«օրենքի դրույթի կիրառում»** հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «...ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ **կիրառված** օրենքի դրույթի...», ... բառակապակցության մեջ **«կիրառում»** հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի **կիրառում»:**

ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «...սահմանադրական դատարան կարող են դիմել ... «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: Վերը հիշատակված սահմանադրական նորմն իր որոշակիացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկա-

կան և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,

- **որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ,**

- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,

- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով՝ թիվ 2 դատական կազմը գտնում է, որ վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթների մասով անհատական դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի կողմից գործի քննության ընդունումը ենթակա է մերժման:

4.2. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթի մասով դիմումն ակնհայտ անհիմն է:

Այսպես, դիմողը, վիճարկելով նշյալ դրույթի սահմանադրականությունը, չի ներկայացրել իրավական փաստարկներ, հիմնավորումներ դրա ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումների քննությունը ... կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է ...: Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է

հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի **նորմի բովանդակությունը** և փորձի գնահատել ու նախատեսել սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի օրենքի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և Սահմանադրության այն դրույթներին, որոնց, ըստ դիմողի, հակասում են տվյալ դրույթները: Միաժամանակ, դիմողը պետք է նաև հիմնավոր և պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ**, որոնք չպահպանելը**, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

4.3. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2015 թվականի մարտի 17-ի ՍԴՈ-1196 և 2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշումներով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համապատասխանաբար 2-րդ և 1-ին կետերը՝ տվյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Հետևաբար, այդ դրույթների մասով առկա է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 2, 3 և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ

հոդվածի 1-ին և 7-րդ մասերով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Իրինա Եղիգարյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

22 փետրվարի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-5